


ՄԱՐՏԻ 3-Ը՝ ՄՈՐ ՕՐ ՄԱՐՏԻ 8-Ը՝ ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ ՇՆՈՐՅԱԿՈՐ ԶԵՐ ՏՈՆԸ, ՍԻՐԵԼԻՆԵՐ

ՎՐԱՍՏԱՆ

«ՅՐԱՆՈՒՅՆ» (ՆԱՅՐԱՏՈՅԻՆ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅԱ Ե ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 17 - 18 (16514) ՇԱԲԱԹ, 4 ՄԱՐՏԻ 2017 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹԻ

ԱՆԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳ

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ԱՅՍՕՐ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԴՈՒՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՅՎԵՅԻՆ»



Մարտի մեկին Բրյուսելում, Եվրախորհրդարանում տեղի ունեցավ այցեգրերի չեղարկման պայմանագրի ստորագրման արարողությունը: Այն ստորագրեցին Եվրախորհրդարանի նախագահ Անտոնիո Տալանին և Եվրոպայի խորհրդի նախագահ-երկրորդ Մալթայի ներկայացուցիչ Կրիս Ագուիրա: Ստորագրման արարողությանը ներկա էին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, ԱԳ նախարար Միխեիլ Ջանելիձեն, Եվրոպական և Յուրիստատլանտյան կառույցներին Վրաստանի ինտեգրման հարցերով պետ-նախարար Վիկտոր Դոլիձեն:



Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին՝ արձագանքելով մարտի 1-ին Եվրախորհրդարանում անայցեգրային պայմանակարգի փաստաթղթի ստորագրման փաստին, հայ-

խորհուրդը հաստատեց կարգավորումների փոփոխումը, ինչը նախատեսում է Վրաստանի քաղաքացիների համար անայցեգրային պայմանակարգի հաստատումը: Վարչապետի խոսքով, Եվրամիությանը (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

«ՄԵՆՔ ԼՐԻՎՈՒԹՅԱՄԲ ԳԻՏԱԿՈՒՄ ԵՆՔ ԱՅՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐԸ ԿԱՊՎԱԾ Է ԱՆԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԻ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՀԵՏ»

Փետրվարի 27-ին պաշտոնական այցով Թբիլիսիում էր գտնվում Եվրամիության միգրացիայի, ներքին գործերի և քաղաքացիության հարցերով եվրակոմիսար Դիմիտրիաս Ավրամուպուլոսը:

Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու հետ հանդիպումից հետո անցկացված համատեղ մամուլի ասուլիսում, Վրաստանի վար-

չապետը հայտարարեց, որ անայցեգրային պայմանակարգի հետ կապված որոշումը հաստատում է, որ Եվրոպան կատարել է իր խոստումը: Վարչապետի խոսքով, Եվրամիությանը (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՖԻՆԱՆՍՆԵՐ



ԴՄԻՏՐԻ ՔՈՒՄՍԻՇՎԻԼԻ. «ԲՅՈՒԶԵՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՐԱՆՏՈՐՄԱՅՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՆԱՅՏՈՒԹՅՈՒՆ Է»

Ինչպես հայտարարեց Վրաստանի ֆինանսների նախարար Դիմիտրի Քումսիշվիլին, 2017 թվականի բյուջեն, ինչպես նաև երկրի կառավարության միջին ժամկետային բյուջետային ծրագրերը ներկայացնում են ֆինանսական տրանսֆոր-

մացված քաղաքականությունը և նախատեսում են վարչարարական ծախսերի կրճատում, տնտեսական աճի համար ազատականացված հարկային համակարգի հիմնում, բյուջետային ծրագրերի և են-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՌՈՒՄԹԱՎԻ 2»-Ի ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՆՁՆՎԵՅՑ ՔԻԲԱՐ ԽԱՎԱՇՈՒՆ



Մարտի 2-ին Վրաստանի Գերագույն դատարանի Սեծ պալատը ընդունեց որոշում «Ռուսթավի 2» հեռուստաընկերության սեփականության հարցի վերաբերյալ:

Գործի քննարկումն անցկացվեց դռնփակ, առանց բանավոր լուսմների, դատարանի շենքի մոտ բազմամարդ ցույցի ֆոնի վրա: Տարբեր լրատվամիջոցների և ընդ-

դիմադիր կուսակցությունների լի-դերները, ինչպես նաև շարքային քաղաքացիները Գերագույն դատարանի մոտ հավաքվել էին իրենց աջակցությունը ցուցաբերելու հեռուստատեսության ղեկավարությանը և աշխատակիցներին:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՄԱՐՏԻ 3-ԻՆ ՎՐԱՍՏԱՆԸ ՆՇԵՑ ՄՈՐ ՕՐԸ

Մարտի 3-ը Վրաստանում Մոր օր է հայտարարվել 26 տարի առաջ՝ 1991 թվականին երկրի առաջին նախագահ Զվիադ Գամսախուրդիայի որոշմամբ: Վրաստանի Գերագույն խորհուրդը որոշել էր, որ Մոր օրը կփոխարինի Մարտի 8-ի Կանանց միջազգային օրվան: Մարտի 8-ը՝ որպես պաշտոնական տոն վերահաստատվեց 1995 թվականին, Էդուարդ Շեարդնաձեի նախագահության օրոք: Մարտի 3-ի տոնի խորհրդանշանն է դարձել մանուշակը:



ՄԱՐՏԻ 8-Ը՝ ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ

Կանանց միջազգային օր, սկզբնական անվանումը Աշխատավոր կանանց միջազգային օր, նշվում է ամեն տարի Մարտի 8-ին: Տարբեր տարածաշրջաններում տոնակատարությունների հիմքում ընկած է կանանց նկատմամբ հարգանքը տնտեսական, քաղաքական և հասարակական ոլորտներում նրանց ձեռքբերումների համար:



Տոնի պատմությունը սկսվեց, երբ Սոցիալ-դեմոկրատական կուսակցության կանանց կոչով Նյու Յորքում 1908 թվականի մարտի 8-ին կայացավ ցույց՝ կանանց իրավահավասարության համար:

1909 թվականին Ամերիկայի Սոցիալիստական կուսակցությունը հայտարարեց կանանց ազգային օր, որը նշվել է մինչև 1913 թվականի փետրվարի վերջին կիրակի օրը: Ավելի ուշ, 1910 թվականին, օգոստոսի 27-ին, կանանց միջազգային երկրորդ կոնֆերանսին, որը անցկացվում էր Կոպենհագենում, Կլարա Յետկինի նախաձեռնությամբ սահմանվեց կանանց միջազգային օր:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

ԱՅՑԵԳՐԵՐԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՈՒՐՁ ԱԿՆԿԱԿՈՒՄ ԵՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փետրվարի 27-ին աշխատանքային այցով Բելգիայի Թագավորությունում գտնվող Հայաստանի նախագահ Սեթ Սարգսյանը առանձնազորույց է ունեցել Եվրոպական խորհրդի նախագահ Դոնալդ Տուսկի հետ: Հանդիպման արդյունքներն ամփոփվել են զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների առջև համատեղ հայտարարություններով:



Նշվեց, որ հանդիպման կենտրոնական թեման Հայաստան-Եվրամիություն մոր շրջանակային համաձայնագիրն է: Կողմերը գոհունակությամբ նշեցին, որ բանակցություններն ավարտվել են: Նոր իրավական փաստաթուղթը՝ համապարփակ է և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը, արտահայտում է Հայաստան-ԵՄ հարաբերությունների իրական ընդգրկումն ու խորությունը:

- Ակնկալում ենք, որ առաջիկայում կմեկնարկի նաև Հայաստանի հետ վիզաների ազատականացման շուրջ երկխոսությունը, ինչն ամրագրված է Արեւելյան գործընկերության Ռիգայի զագաթաժողովի համատեղ հռչակագրում և մեծապես կնպաստի մեր ժողովուրդների միջև կապերի ընդլայնմանն ու խորացմանը,- հայտարարեց Հայաստանի նախագահը:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ԱՆԱՅՅԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳ

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ԱՅՍՕՐ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԴՈՆԵՐԸ ՎՐԱՍԱՆԻ ՔԱՂԱՔԱԳԻՆԵՐԻ ՇԱՄԱՐ ԲԱՅՎԵՑԻՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)


տարարեց, որ այսօր Եվրամիության դրոշմերը Վրաստանի քաղաքացիների համար բացվեցին:

- Ցանկանում եմ Վրաստանի բոլոր քաղաքացիներին շնորհավորել այդ կարեւորագույն որոշման համար, որը հանդիսանում է Եվրամիության կողմից քաղաքական աջակցության ցուցադրում: Դա առաջին քայլը չէ Եվրամիության ուղու վրա, դա նշանակալի ձեռքբերում է Եվրամիությունը ճանապարհիս, - ընդգծեց Վրաստանի վարչապետը: Նա բարեփոխումների իրականացման գործընթացում ցուցաբերած աջակցության համար շնորհակալություն հայտնեց գործընկերներին, Եվրամիության խորհրդին, Եվրամիության խորհրդին, Եվրահանձնաժողովին եւ, առաջին հերթին, Վրաստանի քաղաքացիներին:

Բրյուսելում կարճաժամկետ ուղեւորությունների համար այցելուների չեղարկման մասին կարգավորման ստորագրումը Վրաստանի ԱԳ նախարարությունը անվանեց պատմական իրադարձություն: Համաձայնագիրը ուժի մեջ կմտնի մարտի 28-ից, այսինքն, Եվրամիության պաշտոնական ամսագրում մարտի 8-ին դրա հրապարակումից 20 օր անց:

Նշենք, որ համաձայնագրի համաձայն, Վրաստանի քաղաքացիները առանց այցելուի 90 օրվա ժամկետով կարող են գործարար գրասաշրջության կամ ընտանեկան գործերով լինել Եվրամիության երկրներում:

Վրաստանի ԱԳ նախարարությունը անվանեց պատմական իրադարձություն: Համաձայնագիրը ուժի մեջ կմտնի մարտի 28-ից, այսինքն, Եվրամիության պաշտոնական ամսագրում մարտի 8-ին դրա հրապարակումից 20 օր անց:



ԱՆՂԻԱ

ԼՈՐՂԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ BREXIT-Ի ՀԱՐՑՈՒՄ

Մեծ Բրիտանիայի խորհրդարանի Լորդերի պալատը պահանջել է, որ երկրի կառավարությունը Եվրամիության քաղաքացիներին երաշխավորի Brexit-ից հետո Մեծ Բրիտանիայում մնալու իրավունքը:

Brexit-ի մասին օրինագծի քննարկման ընթացքում, որին արդեն հավանություն է տվել Համայնքների պալատը, Լորդերի պալատի 358 անդամներ քվեարկել են այն բանի օգտին, որ փաստաթղթում ավելացվի կետ, որը Եվրամիության քաղաքացիներին թույլ կտա Բրիտանիայում ապրել եւ աշխատել նաեւ Եվրամիության կազմից երկրի դուրս գալուց հետո:

Դրա դեմ հանդես են եկել պալատի 256 անդամներ: Ի վերջո, նախաձեռնությունն ընդունվել է, եւ այժմ օրինագիծը վերստին քննարկման կուղարկվի Համայնքների պալատ, որը, սակայն, կարող է նաեւ հրաժարվել դրա մեջ մտցնել այդ ուղղումները:

Բրիտանական մամուլը նշում է, որ Լորդերի պալատի որոշումը թերեզա Մեյի կառավարության առաջին խոշոր պարտությունն է Brexit-ի ճանապարհին: Ավելի վաղ նա լորդերին հորդորել էր փաստաթուղթն ընդունել առանց ուղղումների:

Ավելացնենք նաեւ, որ Բրիտանական խորհրդարանի Լորդերի պալատը մերժեց ԵՄ-ի կազմից Մեծ Բրիտանիայի դուրս գալու մասին Լոնդոնի եւ Բրյուսելի միջեւ համաձայնարարային համաձայնագիրը համազգային հանրաքվեի դնելու առաջարկը:

ՖՐԱՆՍԻԱ

ՄԱՐՏԻ ԼԵ ՊԵՆԸ ԶՐԿՎԵՑ ՊԱՏՊԱՆՎՈՐԱԿԱՆ ԱՆՁԵՆՆԻՄԵՆԼԻՈՒԹՅՈՒՆԻՑ

Եվրամիության պատգամավորները մարտի 2-ին կայացած լիազույնար նստաշրջանում քվեարկեցին Եվրամիության պալատի «Ազգային ճակատ» ֆրանսիական կուսակցության առաջնորդ Մարին Լե Պենի պատգամավորական անձեռնմխելիությունից զրկելու օգտին:

Խորհրդարանական անձեռնմխելիությունը հանելու պահանջով հանդես էր եկել Նանտերի դատախազությունը: «Ազգային ճակատի» առաջնորդին մեղադրում են «բռնարարների պատկերումների տարածման» մեջ: Ֆրանսիայում հետաքննություն էր սկսվել այն բանից հետո, երբ 2015 թվականի դեկտեմբերին ծայրահեղ աջ կուսակցության ղեկավարը Twitter-ով տարածել էր «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորման գինյալների կողմից մի քանի պատանդների սպանության լուսանկարներ:

ՄԵՆԵՔ ԼՐԻՎՈՒԹՅԱՐ ԳԻՏԱԿՅՈՒՄ ԵՆՔ ԱՅՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐԸ ԿԱՊՎԱԾ Է ԱՆԱՅՅԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԻ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՀԵՏՑ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Մը: Դա եզրափակիչ փուլերից մեկն է Շենգենյան գոտու երկրներ անայցեգրային ուղեւորությունների շնորհման հարցում: «Անայցեգրային

պայմանակարգը Վրաստանի քաղաքացիներին կոնկրետ օգուտ կբերի: Դա նպաստում է զբոսաշրջության, կրթաշակութային եւ գործարար սերտ հարաբերությունների ձեւավորմանը: Կարելու է նաեւ

այն, որ անայցեգրային պայմանակարգը մատչելի ու օգտավետ կլինի նաեւ բռնազավթված երկրամասերում ապրող մեր քաղաքացիների համար»,- հայտարարեց վարչապետը եւ հավելեց, որ երկ-

րի յուրաքանչյուր քաղաքացի առանձնակի պատասխանատվությամբ կմոտենա իր պարտականություններին եւ հստակորեն կպահպանի անայցեգրային պայմանակարգի պայմանները:

ՎՐԱՍԱՆ-ԲԵԼԱՐՈՒՄ

ԸՆԴՊԾՎԵՑ ԶԱՆԳՈՒՅԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ԸՈՒՐՉ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԶԳՏՈՒՄԸ

Փետրվարի 28-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին պաշտոնական երկօրյա այցով մեկնեց Բելառուս: Այցի շրջանակներում՝ Վրաստանի ղեկավարը հանդիպում է ունեցել Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի, պաշտոնական այլ անձանց հետ:

Բանակցությունների ավարտից հետո երկու երկրների նախագահները հանդես են եկել համատեղ հայտարարությամբ:

Նշվեց, որ Թբիլիսիսի եւ Մինսկը ընդգծում են տարածաշրջանային անվտանգության հանգուցային հարցերի շուրջ կառուցողական համագործակցություն հաստատելու իրենց ձգտումը:

Ալեքսանդր Լուկաշենկոն Գիորգի Մարգվելաշվիլուն շնորհակալություն է հայտնել այն դիրքորոշման համար, որ Վրաստանն ունի «միջազգային կազմակերպու-

թյուններում, Եվրամիությունում, Արեւմտյան պետությունների հետ բանակցություններում՝ պաշտպանելով Բելառուսի շահերը»: «Մենք լավ հարաբերություններ ունենք եւ պարաստ ենք Վրաստանի հետ ցանկացած համագործակցության»,- ասել է Ալեքսանդր Լուկաշենկոն:

Նա նշել է, որ Բելառուսը եւ Վրաստանը հնարավորություն ունեն փոխադարձ



առեւտրաշրջանառությունը հասցնել տարեկան 200 մլրդ դոլարի:

Նախագահների ներկայությամբ ստորագրվել են բելառուսա-վրացական միջկառավարական մի շարք համաձայնագրեր:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



ՀԱՆԴԻՊՈՒՄ ՆԱՏՕ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՀԵՏ

Մարտի 2-ին Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Քեթեան Ցիխելաշվիլին հանդիպում ունեցավ Կանանց խաղաղության եւ անվտանգության հարցերով ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի ներկայացուցիչ Մարիետ Շուրմանի հետ:

Հանդիպմանը Վրաստանի պետնախարարը գործընթացում կանանց ներգրավման անհրաժեշտությունը: «Դիմակայության տրանսֆորմացման, վստահության վերականգնման եւ, ընդհանրապես, խաղաղարար գործընթացում կանանց ներգրավումը, նրանց ակտիվացումը կարելու է նշանակություն ունի, ուստի մենք առավելագույնս փորձում ենք աջակցել սնան ներգրավմանը եւ, ընդհանրապես, կանանց դերի ակտիվացմանը»,- հայտարարեց Քեթեան Ցիխելաշվիլին:

ԱՐՁԱԳԱՆՔ

ԿԱՆԻ ԿԱԼԱՉԵ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆԸ ԱՐԽԱՉԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԲԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ ԽՈՍՔ ԳԻ ԵՂԵԼ»

Ինչպես հայտարարեց Վրաստանի փոխվարչապետ Կախի Կալաձեն, Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանի Վրաստան կատարած այցի ժամանակ՝ որպես Ռուսաստանից Հայաստան այլընտրանքային ուղի Արխազիայի երկաթուղային հատվածի բացման մասին խոսք չի եղել:

Մեկնաբանելով վրացական ընդդիմության կողմից տարածված լուրերը, փոխվարչապետը հայտարարեց. «Ընդդիմությունը հաճախ սխալ-

վում է: Այդ մասին խոսք չի եղել, եւ կոնկրետ այդ նախագիծը կառավարությունում էլ չի քննարկվել: Որպես այլընտրանքային ուղի, եր-

կաթուղու արխազական հատվածի բացման մասին բանակցությունների բացակայությունը հաստատեց նաեւ Հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Քեթեան Ցիխելաշվիլին: «Այս օրերին սույն հարցի շուրջ եղան տարբեր մեկնաբանություններ: Գտնում եմ, որ քննարկված հարցերի մասին արվեց միան-

շանակ հայտարարություն: Երկաթուղու հարցով բանակցություններ չեն եղել»,- ընդգծեց պետնախարարը:

Վրաստանի խորհրդարանի պաշտպանության եւ անվտանգության կոմիտեի նախագահ Իրակլի Սեխիաշվիլին, իր հերթին, նշեց, որ երկաթուղու արխազական հատվածի բացման հարցը օրակարգում չի եղել:

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ. «ՈՐՊԵՍ ՎԵՐԻՆ ԼԱՐՍԻ ԱՅԼԵՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՈՐԻ, ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՀԱՐՑԸ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԳԻ ՔՆՆԱՐԿԵԼ»

Հայաստանը Վրաստանի հետ որպես վերին Լարսի ավտոմայրուղու այլընտրանք Արխազիայի տարածքով երկաթուղու բացման հարցը չի քննարկել:

«Արխազական երկաթուղու հարցը չի քննարկվել, քննարկվել են այլընտրանքային այլ տարբերակները: Հավանական եմ համարում, որ որոշումը կգտնենք»,- Հայաստանի ազգային ժողովում հայտարարեց երկրի վար-

չապետ Կարեն Կարապետյանը: Նրա խոսքերով, այդ հարցով բանակցություններ են տարվում:

Հիշեցնենք, որ փետրվարի 24-ին Հայաստանի վարչապետի Վրաստան կատարած պաշտոնական այցի շր-

ջանակներում երկու երկրները պայմանավորվածության էին հասել այլընտրանքային ավտոմայրուղու հարցում: «Եթե ձեզ հետաքրքրում է, արդյոք, Լարսի ավտոմայրուղին կարող է ունենալ այլընտրանք, ապա կարող եմ հավաստիացնել՝ կունենա: Մանրամասները կլինեն հետո, փակագծերը դեռ չենք բացում»,- ընդգծեց Կարեն Կարապետյանը:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՔՆՆԱՐԿՎԵՑ ԶԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՌԱՄՅԱ ՆՈՐ ԾՐԱԳԻՐԸ



Հանդիպմանը կողմերը քննարկեցին հիմնադրամի եռամսյա նոր ծրագիրը, որն առնչվում է Վրաստանում առկա տնտեսական զարգացման, ֆինանսական եւ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին համոզվում ունեցավ Արժույթի հիմնադրամի ներկայացուցիչների հետ:

դրամական քաղաքականության տնտեսական աճի ցուցանիշի, կենսաթոշակային բարեփոխման եւ կապիտալի շուկայի զարգացման հարցերին: Քննարկվեց նաեւ Վրաստանի գյուղատնտեսության զարգացման արգելակող հողերի գրանցման հարցը: Ինչպես նշվեց հանդիպմանը, ծրագրվում է հողերի գրանցման առավել ակտիվացում, ինչն էական նշանակություն կունենա գյուղատնտեսության դինամիկ զարգացման գործում:

Կողմերը քննարկեցին նաեւ միջին եւ փոքր ձեռներեցության զարգացման արգելակող գործոնները: Հիմնադրամի ներկայացուցիչները պատրաստակամություն հայտնեցին մասնակցել նման գործունեության բացահայտման գործում, ինչն առաջիկայում կնպաստի Վրաստանում փոքր եւ միջին ձեռներեցության զարգացմանը:



ԿՐԹԱՎԱՆ

ԱՆԵՔՍԱՆՈՐ ՁԵՋԵԼԱՎԱ. «ԱՌԱՐԿԱՅԻ ԼԱՎ ԻՄԱՆԱԼԸ ՉԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ ԼԻՆԵԼ ԼԱՎ ՈՒՍՈՒՑԻՉ»

Ինչպես հայտարարել է Վրաստանի կրթության եւ գիտության նախարար, փոխվարչապետ Ալեքսանդր Ձեջելավան, ուսուցիչների գիտելիքների մակարդակի գնահատականը իրականացվելու է տարբեր չափորոշիչներով: Ուսուցիչները, բացի առարկայի իմացությունից, պետք է ապացուցեն նաեւ իրենց մասնագիտական ունակությունները:

Վրաստանի Հանրային հեռուստատեսությանը տված հարցազրույցում նախարարը նշել է, որ նոր համակարգի կարեւորագույն բաղադրամասը կլինի դասաժամերին ծնողների ներկայությունը:

Նոր սխեման հիմնված է մեծ իրավասության գնահատականի վրա: Ասել, որ ուսուցիչը, որը լավ գիտի քիմիան, հանդիսանում է լավ մանկավարժ, սխալ գնահատական է, ուստի մենք ցանկանում ենք, որպեսզի այդ սխեման կազմվի տարբեր բաղադրիչներից: Քիմիայի ուսուցիչը պետք է ապացուցի առարկայի իմացության իրավասությունը, սակայն, միաժամանակ, նա հաստատելու է նաեւ մանկավարժական ունակությունների իրավասությունը: Եվ, ամենակարեւորը, ոչ մի քննություն մեզ չի կարող համոզել, որ ուսուցիչը անցկացնում է հետաքրքիր դաս, հետեւաբար, դասաժամերին ծնողների, մյուս գործընկերների ներկայությունը այդ համակարգի կարեւորագույն բաղադրիչն է,- նշել է Ալեքսանդր Ձեջելավան հավելելով, որ մանկավարժների թեստավորումը չի վերացվում, եւ քննության փոխարեն դա կկոչվի իրավասության հաստատում:



ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԸ ԿՍԿԱԿԵՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ



Ինչպես հայտարարեց Վրաստանի աշխատանքի, առողջապահության, սոցիալական պաշտպանության նախարար Դավիթ Սերգենկոն, կենսաթոշակային բարեփոխումների առաջին փուլի մեկնարկը կտրվի 2017 թվականի սեպտեմբերին, եւ վստահություն հայտնեց, որ բարեփոխումները կսկսվեն սահմանված ժամկետներում:

Բնականաբար, օրենքներում կպահանջվեն փոփոխություններ: Գտնում են, որ մինչեւ սեպտեմբեր ժամանակը կբավարարի բոլոր մանրամասների կարգավորման համար, եւ վստահ ենք, որ բարեփոխումները կսկսվեն ժամանակին,- ասաց Դավիթ Սերգենկոն:

Հիշեցնենք, որ այդ ոլորտը ծրագրում է ներդնել կուտակումային կենսաթոշակային մոդելը: Համաձայնակցության սկզբունքը հետեւյալն է՝ քաղաքացին կենսաթոշակային հիմնադրամ 2 տոկոսանոց վճարում է կատարում,

իսկ գործատունն էլ պետությունը պարտավորվում են լրացուցիչ փոխանցել 2-ական տոկոս: Ողջ մոնոնը կկազմի 6 տոկոս, որը հարկադրման ենթակա չէ: Կուտակումային կենսաթոշակային համակարգին մասնակցությունը կամավոր է:

ՀԱՄԸՆԴՅԱՆՈՒՐ ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Ընթացիկ տարվա մարտի 1-ից մեջ մտան համընդհանուր առողջապահության ծրագրի նոր չափորոշիչները:

Բժշկական հաստատություններում սկսվում է տեսակավորման գրանցումը եւ այն սկզբնական փուլում ուղղված է մոր եւ մանկան առողջությանը: Տեսակավորման գրանցումը կիրականացվի

միայն այն հիվանդանոցներում, որտեղ տարեկան շուրջ 500 ծնունդ է գրանցվում: Ընդունվել են լրացուցիչ չափորոշիչներ: Այդ չափորոշիչները նախատեսում են մի շարք ուղղություններ, մաս-

նավորապես՝ վարակների նկատմամբ վերահսկողության, նորածնների եւ հղի կանանց նկատմամբ հոգատարության որակի բարձրացում, ինչպես նաեւ որոշակի ենթակառուցվածքի հիմնում:

Նախնական փուլում փոփոխությունները կիրականացվեն թբիլիսիում, Քութայիսիում եւ Բաթումիում:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Ազգային փոքրամասնության հարցերով Վրաստանի նախագահի խորհրդական Սոփիո Շամանիդին, փետրվարի 24-ին, հանդիպում ունեցավ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ ուսանողների հետ:

Հանդիպմանը խոսվել է ազգային փոքրամասնություններին հուզող հիմնախնդիրների, նրանց ինտեգրման նշանակության եւ ազգային փոքրամասնությունների զարգացման համար համապատասխան պայմանների ստեղծման մասին:

Ինչպես նշել է Սոփիո Շամանիդին, ժողովրդավարական պետությունը հեն-

ված է իրենց սահմանադրական իրավունքներն ու սահմանադրական պարտականությունները գիտակցող քաղաքացիների վրա: Նա ուսանողներին կոչ է արել ցուցաբերել առավել քաղաքացիական ակտիվություն եւ շարունակել գործել երկրի քաղաքացիական հասարակայնությանը ինտեգրման ուղղությամբ:



«Վրաստանի նախագահի համար կարեւոր է իմանալ, թե ինչպես է ապրում ազգային փոքրամասնությունը ներկայացնող երկրի բնակչության մեկ երրորդը»,- ասել է Սոփիո Շամանիդին:

ՀԻՇԱՏԱԿԻ ԵՐԵԿՈ

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ԱՆՄԵՂ ԶՈՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

ՍՈՒՐԳԱՅԻԹԻ, ԲԱՔՎԻ ԵՎ ԿԻՐՈՎԱՔԱՐԻ ՀԱՅՎԱԿԱՆ ԶԱՐԴԵՐԻ ՉՈՇԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՄԻՋՈՏԱՌՈՒՄ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

2017 թվականի փետրվարի 28-ին, Թբիլիսիի Ռեդիսոն-բլու հյուրանոցի համընդհանուր դահլիճում, տեղի ունեցավ Սունգայիթի, Բաքվի եւ Կիրովաբադի հայկական ջարդերի զոհերի հիշատակի երեկո:

Հիշատակի միջոցառումը կազմակերպել էին Թբիլիսիում գործող հայկական կազմակերպությունները: Միջոցառման իրենց ներկայությունն էին բերել ինչպես Թբիլիսիի հայ մտավորականները, համայնքային գործիչներն ու հասարակայնության ներկայացուցիչները, այնպես էլ՝ վրաց քաղաքական ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Այստեղ էին նաեւ Վրաստանում ՀՀ դեսպանության դիվանագետները:

Միջոցառումն սկսվեց Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանի աղոթքով:

Ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին Սունգայիթի, Բաքվի եւ Կիրովաբադի հայկական ջարդերի զոհերի հիշատակը:

Այնուհետեւ ներկաներին ընթերցվեց Վրաստանում գործող, որոշ հայկական ոչ կառավարական կազմակերպությունների երկրի ղեկավարներին ուղղված համատեղ դիմումը:

Ելույթներով հանդես եկան Վրաստանում Հայաստանի դեսպանության առաջին քարտուղար Արթուր Մարգարյանը, «Վրաստանի հայ համայնք» կազմակերպության նախագահ Սամվել Մկրտչյանը, «Վրացահայերի միություն» ՀԿ փոխնախագահ Մարի Առաքելյանը, Վրաստանի խաղաղության հիմնադրամի նախագահ Գիորգի Թումասյանը: Այնուհետեւ ցուցադրվեց տեսաֆիլմ սունգայիթյան դեպքերի մասին:

Միջոցառման մշակութային մասում դասական երաժշտության կատարումներով հանդես եկան Թբիլիսիի Վանո Սարաջիշվիլու անվան պետական կոնսերվատորիայի լարային գործիքների դասարանների ուսանողներ Նաթիա Գիաշվիլին, Տատա Քորքաձեն, Տատա Գվազալան եւ Հենրիխ Էրոյանը: Դաշնամուրի մոտ նվագակցում էր Իրինա Պլատոնովան: Հիշատակի միջոցառումը եզրափակեց Թբիլիսիի Սուրբ Գեորգ առաջնորդախոս եկեղեցու Մակար Եկմայան երգչախումբը:

ՆԵՐՈՒՄ 157 ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին ներում է շնորհել 157 բանտարկյալների, նրանց թվում են ութ կին եւ մեկ դեռահաս: Մարտի 1-ին կայացած մամուլի ասուլիսում այդ մասին հայտարարեց ներման հանձնաժողովի նախագահ Չվիադ Քորիձեն: «Ներման հանձնաժողովը 890 բանտարկյալների հարց է քննարկել 2017 թվականի փետրվարի 16-ից մինչեւ 21-ն ընկած ժամանակամիջոցում... 2017 թվականի մարտի մեկին Վրաստանի նախագահը ներում է շնորհել 157 կալանավորների, նրանց թվում են ութ կին եւ մեկ դեռահաս բանտարկյալ: Պատիժների կրման հիմնարկություններից հեռացել են 93 բանտարկյալներ, որոնց թվում վեց կին եւ մեկ անչափահաս»,- նշեց Չվիադ Քորիձեն:

Հանձնաժողովի նախագահի խոսքով, 64 կալանավորների, այդ թվում երկու կանանց համար կրճատվել է պատիժը կրելու ժամկետը:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿԱՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(3 մարտի)

Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը:

ՏԱՐԱԴՐԱՄ	ԱՌՔ	ՎԱՃԱՌՔ
ԱՄՆ ԴՈԼԱՐ	2.425	2.535
ԵՎՐՈ	2.523	2.691
ՌՈՒՐԼԻ	0.039	0.046
ԴՐԱՄ	0.0038	0.0056

Փետրվարի 24-ի համեմատությամբ, դոլարի կուրսը նվազել է 0,11 լարիով:

ԱՅՑԵԳԻՐ - ՎԻՉԱ

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐ ԱՆԱՅՅԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԻՑ ԾԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ



թյան (Շենգենյան գոտու անդամ երկրներում աշխատանքի) տեւական ուսուցման իրավունքը:

* Եվրամիություն/Շենգենյան գոտու անդամ երկրների տարածք մուտք գործելու ժամանակ Վրաստանի քաղաքացին.

- չպետք է գտնվի այն անձանց ցուցակում, ովքեր սպառնալիք են ստեղծում հասարակական կարգուկանոնին եւ առողջությանը կամ ներքին անվտանգությանը,

- չպետք է լինի դատված Եվրամիության/Շենգենյան գոտու անդամ երկրների քրեական դատարանների կողմից այնպիսի իրավախախտումների համար, որոնք նախատեսվում են ազատազրկում մինչև մեկ տարի ժամկետով,

- չպետք է լինի Եվրամիության/Շենգենյան գոտու անդամ երկրներից նրա արտաքսման մասին որոշումը,

- չպետք է լինեն հակաօրինական գործունեությունում նրա մասնակցության կամ նման մտադրության մասին անտարակուսելի ապացույցներ,

- չպետք է լինեն այն անձանց ցուցակում, ում արգելված է մուտք գործել Եվրամիության/Շենգենյան գոտու անդամ երկրների տարածք:

* Վրաստանի քաղաքացիները պարտավոր են պաշտպանել այդ երկիր մուտք գործելու եւ գտնվելու օրենքները, նաեւ՝ այդ երկրներում գործող մյուս օրենքները.

- 90-օրյա ժամկետի սպառնալիքներով, Եվրամիության/Շենգենյան գոտու անդամ երկրների տարածքում գտնվելը կհամարվի անօրինական: Այդ անձը կարտաքսվի երկրից, եւ նա հինգ տարի ժամկետով իրավունք չի ունենա մուտք գործել Եվրամիության/Շենգենյան գոտու անդամ երկրների տարածք:

Այլընտրանքի տեսքով հնարավոր է օգտագործվի վարչական միջոցը՝ տուգանքը մինչև 3000 եվրոյի չափով: Տուգանքը չվճարելու դեպքում, իրավախախտողին կարգելվի մուտք գործել համապատասխան երկրներ (Եվրամիության/Շենգենյան գոտու անդամ երկրների տարածք):

- Օրինականորեն գտնվելու ժամանակահատվածում այլ իրավախախտումներ կատարելու դեպքում, Վրաստանի քաղաքացիներին կսահմանվի համապատասխան պատասխանատվությունը գտնվելու երկրի օրենսդրության համաձայն, որից հետո նա կարտաքսվի այդ երկիր եւ հինգ տարի ժամկետով իրավունք չի ունենա մուտք գործել Եվրամիության/Շենգենյան գոտու անդամ երկրների տարածք:

- Եվրամիության/Շենգենյան գոտու անդամ երկրներում առանց աշխատանքի թույլտվության աշխատելը համարվում է անօրինական, ինչը հնարավոր է հանգեցնի այդ երկրից արտաքսման եւ այդ երկիր մուտք գործելու արգելքի:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՉԵ

Այսպիսով իր տրամաբանական ավարտին հասցվեց Վրաստանի քաղաքացիների համար Եվրամիության եւ Շենգենյան գոտու անդամ երկրներ անայցեգրային պայմանակարգի ներդրման ընթացակարգը: Մարտի մեկին Բրյուսելում տեղի ունեցավ համապատասխան համաձայնագրի ստորագրման արարատոությունը: Մարտի 8-ին, Եվրամիության պաշտոնական կայքում համաձայնագրի հրապարակումից 20 օր անց, մարտի 28-ին, անայցեգրային պայմանակարգը կնոսրի ուժի մեջ:

Հաշվի առնելով թեմայի նկատմամբ Վրաստանի քաղաքացիների արտակարգ հետաքրքրությունը, ստորև ներկայացնում ենք անայցեգրային պայմանակարգից օգտվելու պարտադիր ընթացակարգերը:

ԱՌԱՅՑ ԱՅՅԵԳՐԻ ՈՐ ԵՐԿՐՆԵՐ ԿԱՐԳ ԵՔ ՄԵՎԵՆԵԼ

Նախ նշենք, որ կենսաչափական անձնագիր ունեցող Վրաստանի քաղաքացին առանց այցեգրի կարող է ուղեւորվել Շենգենյան գոտու տարածք, որը ներառում է Եվրամիության 22 անդամ երկրներ (Ավստրիա, Բելգիա, Գերմանիա, Դանիա, Իսպանիա, Եստոնիա, Իտալիա, Լատվիա, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Մալթա, Նիդերլանդներ, Լեհաստան, Պորտուգալիա, Ֆրանսիա, Ֆրանսիա, Սլովակիա, Սլովենիա, Չեխիա, Եվրոպա, Ֆինլանդիա), բացառություն են կազմում Մեծ Բրիտանիան եւ Իռլանդիան ու Եվրամիությունում չներգրավված չորս երկրներ (Իսլանդիա, Լիխտենշտեյն, Նորվեգիա, Եվրոպա-րիա): Անայցեգրային ուղեւորության պայմանակարգը գործում է նաեւ Շենգենյան գոտու անդամության թեկնածու չորս երկրներում (Բուլղարիա, Կիպրոս, Ռումինիա, Խորվաթիա):

ԱՌԱՅՅԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿՈՂՄԸ

* Անայցեգրային ուղեւորության պայմանակարգը չի առնչվում երկարաժամկետ այցելություններին, օրինակ, բարձրագույն կրթություն ստանալու կամ աշխատանքի համար:

* Կարճաժամկետ այցեգիրը նախատեսվում է 180 օրվա ընթացքում ցանկացած 90 օր, այսինքն՝ ցանկացած վեց ամսից միայն երեք ամիսը:

180 օրվանից թույլատրելի 90 օրը կարելի է օգտագործել լրիվությամբ կամ օրերը բաժանել:

* 90 օրվա ընթացքում թույլատրելի է բազմակի մուտք Եվրամիության (Շենգենյան գոտու) անդամ երկրների տարածք, սակայն անհրաժեշտ է համոզվել, որ ձեր այցելության տեւողությունը, ընդհանուր առմամբ, չի գերազանցի վերջին 180 օրվա ընթացքում 90 օրը:

Եվրամիության (Շենգենյան գոտու) անդամ երկրների տարածքում տեւական ժամանակահատվածով ուղեւորության ցանկության դեպքում, կրկին կգործի այցեգրային պայմանակարգը, եւ Վրաստանի քաղաքացիները այցեգիրը ստանալու համար պետք է դիմեն Վրաստանում հավատարմագրված համապատասխան երկրների հյուպատոսությանը:

Անայցեգրային ուղեւորության պայմաններով նախատեսված 90-օրյա տեւողության կարճաժամկետ այցեգրի նպատակը կարող է լինել զբոսաշրջությունը, ընտանիքի անդամների (ազգականների) մերձավորների հետ հանդիպումը, գործնական հանդիպումների բանակցու-

թյունների վարումը, միջազգային խորհրդաժողովներին, գիտաժողովներին, սիմպոզիումներին կամ ցուցահանդեսներին մասնակցությունը, կարճաժամկետ ուսումնական դասընթացներին եւ վարժանքներին, փոխանակման ուսումնական ծրագրերին մասնակցությունը, մշակութային-գիտական եւ մարզական միջոցառումներին մասնակցությունը, բժշկական սպասարկումներից օգտվելը՝ կարճաժամկետ բուժական կուրս/վիրահատություն:

ԻՆՉ ՓԱՍՏԱԴՐՈՒՄ ԵՆ ԱՆՀՐԱՊԵՏՆ ԱՌԱՅՅԵԳՐԱՅԻՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

* Գործող կենսաչափական անձնագիր, որի գործողության ժամկետը Վրաստան վերադառնալու օրվա համար չպետք է լինի վեց ամսից պակաս:

ԻՆՉ ԿՊԱՆԱՆՑՎԻ ՍԱՄԱՆԱՅԻՆ ՎԵՐԱՀԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

* Եվրամիության/Շենգենյան գոտու անդամ երկրների տարածք մուտք գործելու ժամանակ սահմանային ծառայության ներկայացուցիչները հնարավոր է հետաքրքրվեն, թե ինչն է ձեր ուղեւորության նպատակը (օրինակ, գործնական այց, զբոսաշրջություն, բարեկամների կամ ազգականների հետ հանդիպում, 90-օրյա ժամկետով ուսումնական դասընթաց):

Ուղեւորության նպատակը հաստատելու համար սահմանային ծառայության ներկայացուցիչները իրավասու են պահանջելու հետեւյալ փաստաթղթերը.

* Վրաստան վերադառնալու տոմսը, հյուրանոցի ամրագիրը, ճանապարհորդական ապահովագրությունը, ճանապարհորդության ֆինանսական ապահովումը հաստատող փաստաթուղթը (օրինակ, կանխիկ գումարը, ճանապարհորդական կտրոնը, գործող բանկային էլեկտրոնային քարտ):

Ի ՆԿԱՍԻ ՈՒՆԵՅԵ

* Մինչեւ Եվրամիության /Շենգենյան գոտու անդամ երկրներում գտնվելու 90-օրյա (180 օրերից) ժամկետի սպառումը՝ Վրաստանի քաղաքացին պետք է հեռանա Շենգենյան գոտուց:

Այդ երկրներում 90 օրից ավելի գտնվելու դեպքում, երկրորդ անգամ ուղեւորվելը հնարավոր կլինի միայն Շենգենյան գոտին թողնելուց 90-օրյա ժամկետի անցումից հետո:

* Անայցեգիր ուղեւորությունը չի ընձեռում Եվրամիու-

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ԴՄԻՏՐԻ ՔՈՒՄՍԻՇՎԻԼԻ. «ԲՅՈՒՋԵՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՐԱՆՏՖՈՐՄԱՅՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ Է՛»

(Արհիվանք՝ 1-ին էջում)

թակառույցային նախագծերում ներդրումների աճի առավել արդյունավետություն:

«Արժույթի միջազգային հիմնադրամի հետ բանակցություններում մենք պայմանավորվեցինք կառավարության չորս կետից բաղկացած ծրագրի եւ 2017 թվականին իրականացվող ու ծրագրված բարեփոխումների նշանակության մասին: Ծրագրված բարեփոխումների թվում են շահութահարկի եւ եկամուտների մրցիվիզացման, վարչարարական ծախսերի նվազեցման ուղղված քայլերը, որի հիմնական նպատակն է՝ արագացնել տնտեսական աճը, աջակցել գործարարությանը եւ ապահովել բնակչության տնտեսական բարեկեցությունը»,- ասաց Դմիտրի Քումսիշվիլին հավելելով, որ 2017-2020 թվականներին կավարտվի ճանապարհային ենթակառուցվածքի կարգավորումը, ինչը լրացուցիչ ազդակ կհաղորդի զբոսաշրջության պոտենցիալին: Ենթակառուցվածքի զարգացման կարեւորագույն արդյունքը կլինի տարածաշրջանների միջեւ կապի բարելավումը, ինչը կբարձրացնի նրանց տնտեսական մասնակցության մակարդակը երկրի զարգացման գործում:

Ինչպես նշեց Դմիտրի Քումսիշվիլին, կառավարական ծրագրի շրջանակներում, ծրագրված են ենթակառուցվածքային բարեփոխումների այնպիսի կարեւոր քայլեր տնտեսական աճի համար, ինչպիսիք են կենսաթոշակային բարեփոխումը, կապիտալի շուկայի բարեփոխումը, դեպոզիտների ապահովագրության համակարգի հիմնումը, ապահովագրական համակարգի բարեփոխումը, մասնավոր եւ հանրային հատ-



վածների միջեւ համագործակցության համակարգի ստեղծումը, հողային բարեփոխումը եւ այլն:

Անդրադառնալով Արժույթի միջազգային հիմնադրամի առաքելության հետ անցկացված բանակցությունների արդյունքներին, փոխվարչապետ, ֆինանսների նախարար Դմիտրի Քումսիշվիլին ընդգծեց, որ երկրի կառավարության ու հիմնադրամի միջեւ ձեռք է բերվել պայմանավորվածություն 285 միլիոն դոլարի չափով նոր ծրագրի վերաբերյալ: «Այդ եռամյա ծրագիրը իրականացվելու է ի պաշտպանություն կառավարության տնտեսական քաղաքականության: Նոր ծրագիրը ոչ միայն կառավարությանը ցուցաբերած վստահության արտահայտությունն է, այլեւ այն լրիվությամբ հիմնված է կառավարության բարեփոխումների ծրագրի վրա»,- նշեց Դմիտրի Քումսիշվիլին:



ՅՅՈՒՆԱՅՈՒՅՆ ՆԱԶՆԱՆՆԵՐ

ԵՎԱՄՈՒՏՆԵՐ

ՄԵԿՈՒԿԵՆ

ՄԻԼԻԱՐԴ ԼԱՐԻ ԶԱՐԿԱՅԻՆ

ՊԱՐՏՔԸ ՉԵՂԱՐԿԵՑ

Վրաստանի հարկային օրենսգրքում կատարված փոփոխությունների գործարկումից (2016 թվականի հունիսի 1) հետո մինչ օրս չեղարկվել է 34449 հարկատուների հարկային պարտքը, ընդհանուր առմամբ, 1451705992.00 լարիի չափով:

Վերոնշյալ փոփոխությունները հարկային օրենսգրքում կատարվեցին 2016 թվականի մայիսին: Համաձայն այդ փոփոխությունների, չեղարկվում են մինչեւ 2011 թվականի հունվարի 1-ը կուտակված հարկային վարկերը, եթե հարկատուի ակտիվությունը չի վավերացվել, նա չի ներկայացրել հարկային հոշակագիրը, բացառությամբ գույքի հարկային հոշակագրի կամ հարկային մարմնին ներկայացված հարկային հոշակագրում շահույթ չի վավերացվել, մինչեւ 2013 թվականի հունվարի 1-ը հարկային պարտքերի վրա ավելացված տուգանքը եւ մինչեւ 2013 թվականի հունվարի 1-ը սահմանված պատժազու-մարները, որոնք ճանաչվել են հարկային գումարի վճարման պայմանով, եթե չի վավերացվել հարկատուի ակտիվությունը, չի ներկայացրել հարկային հոշակագիրը, բացառությամբ գույքի հարկային հոշակագրի կամ հարկային մարմնին ներկայացված հարկային հոշակագրում շահույթ չի վավերացվել, մինչեւ 2013 թվականի հունվարի 1-ը սահմանված կամ այդ նորմի խախտման համար սահմանված տուգանքի գումարը:

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎԱՄՈՒՏՆԵՐԻ ԾՈՒԱՅՈՒԹՅՈՒՆ